

ΕΦΗΜΕΡΙΣ Η ΕΝΩΣΙΣ

3408E
M. ARCHAM
Poste Restante
ATHENES (Grèce)

Փոսթին ծախքը խմբա-
գրութեան կը պատկանի :

ՄԻՈՒԹԻՒՆ

ԱՄՍԱԹԵՐԹ

ՕՌԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԳԱՂԱՓԱՐԻ

Ազգի մը ապագայ
կեանքի բարեփոխման
առաջին պայմանն է
Միութիւնը:

«Միութիւն»ը ա-
մեն տեղ ձրի կը շըր-
կուի:

Ա. ՏԱՐԻ

ՅՈՒԼԻՍ

1897

ԱԹԵՆՔ

ԹԻԻ 12

ՁԱՅՆ ԲՍՐԲԱՌՈՅ ՅԱՆԱՊԱՏԻ

Ահա՛ տարի մըն է որ միութիւն
կը քարոզենք անընդհատ. կը քարո-
զենք ամեն զոհողութիւն յանձն առ-
նելով, մեր նիւթական, բարոյական
ու ֆիզիքական բոլոր ուժերը սպա-
ռելով և դեռ, աւա՛ղ, արդիւնքի մը
չհասանք:

Իրա՛ւ է որ կրցանք միութեան
հարցը մէջտեղ դնել, օրուան խնդիրը
ընել զայն, ժողովրդի գաղափարին
ու փափաքներուն արձագանգը ըլլալ,
համակրողներու ստուար թիւ մը բո-
լորել մեր շուրջը և վերջապէս ստի-
պել մեր յեղափոխական մարմիննե-
րու գլուխները որ լուրջ նկատողու-
թեան առնեն միացման խնդիրը,
բայց գործնական, չօգտօնելի արդիւն-
քի մը չյանգեցանք:

Այո՛, հոս ու հոն, շատ վիճա-
բանեցան միութեան վրայ, սրճա-
բաններու մէջ Դաշակեցական ու
Հնչակեան եղբայրներ այդ հարցը սե-
ղանին վրայ դրին, օղիի ու գինիի
շիշերուն քով, տաք հակաճառութիւն-
ներ ըրին և շատ անգամ պատահե-
ցաւ որ յանուն միութեան իրարու
գլուխ պատռելու չափ առաջ գացին:
Նորէն կը կրկնենք, այդ չէր մեր
ուզածը, այդ չէր մեր փափաքածը...

Բայց իրա՛ւ բոլորովին «Ձայն
բարբառոյ յանապատի» եղաւ մեր
քարոզութիւնը: Պէ՛տք է որ այդ
յուսահատական եղբակացութիւնը

ընդունինք և փշրենք մեր գրիչը:

Ո՛չ երբեք:

Մեր միամեայ գործունէութեան
արդիւնքը բոլորովին զրօի համարժէք
չէ: Եթէ մեր բուն նպատակին չհա-
սանք դեռ, գոնէ կրցանք այս մէկ
տարուան ընթացքին մէջ որոշակի
գիտնալ թէ ո՛ւր կը կայանայ միու-
թեան արգելքը, կամ որո՞նք են ան-
միաբանութեան բո՛ւն և միակ պա-
տասխանատուները:

Մենք այս մէկ տարուան ըն-
թացքին մէջ տեսանք որ ժողովուր-
դը, առանց բացառութեան, միու-
թիւն կ'ուզէ, Հնչակեան և Դաշակե-
ան անդամները միութիւն կ'ուզեն
և մի միայն յեղափոխական եր-
կու կեդրոններու անդամներէն ու-
մանք են որ միութիւն չեն ուզեր,
այսինքն՝ երեք չորս հոգի: Ինքնա-
կոչ պետեր, Ժընէվի կամ Լոնտոնի
մէջ պարարտացող յեղափոխական-
ներ, աղջիկներու հետ զբօսնող տե-
նօրներ և անկողնի ագիտատորներ...

Այդ կարգի յեղափոխականնե-
րուն ամենէն կատարելագործեալ
տիպարները Աւետիք Նազարբէկեան
ու իր շնորհագուրկ տիկինը չէ՞ին:
Այդ Նազարբէկը որ գոնէ խելանի ըլ-
լալու արդարացումը չունի, այդ տի-
կինը որ գոնէ գեղանի ըլլալու ար-
դարացումը չունի և որոնք սակայն
ամբողջ տասը տարի գրեթէ պաշ-
տուեցան կարգ մը ապուշներու կող-
մէ և հազիւ թէ քանի մը հոգի գրա-
նուեցան որոնք կարող եղան իրենց

դիմակը վերջապէս բզկտելու և յեղա-
փոխականի դիմակին տակ ծածկուած
լեռնական աւաղակները սուրբ
գործին իբր թէ խաչակիր՝ այդ խա-
չագողները, Հայկական յեղափոխու-
թեան այդ փոխունքները ցախաւելով
մը մաքրելու և նետելու մոռացու-
թեան կոյանոցին մէջ:

Ինչո՞ւ կը յիշենք այդ անխիղճ
թշուառականներու անունները, որոնք
արդէն սրբուած են Հայ ազգի ցան-
կէն:

Որովհետեւ կը տեսնենք որ հի-
մակ ևս համաման հրէշներ մուտք
գտած են յեղափոխական մարմիննե-
րու մէջ, որոնք կը ջանան հակառա-
կիլ միութեան վսեմ գործին:

Որովհետեւ անունը չէ որ պէտք
է ատել, այլ մարդը: Ներոն կայսրը
կամ սուլթան Համիտ միւսնոյն բանն
է, Վարազ Շապուհ կամ Յովհաննէս
Նուրեան միւսնոյն բանն է: Նոյնպէս
ալ երբ յեղափոխական մը որ անձ-
նական շահը, փառասիրութիւնը,
քինախնդրութիւնը, ազգասիրութենէ
վեր կը դասէ, Նազարբէկ կոչուի
կամ ուրիշ բան մը, միշտ և միշտ
միւսնոյն բանն է:

Պէտք է միանգամայն ընդ միշտ
Մեհրուժանի պսակով պսակել այդ
անձերը, պէտք է մեր հօտէն դուրս
վանել այդ ապականուած՝ քոսոտ
անասունները, այդ պիղծ ու գարշելի
արարածները, այդ հոտած որդերը,
որոնք կ'ապականեն ազգին մարմինը

և բորենիններու պէս՝ դիակներու մէջ կը փնտռեն իրենց կերակուրը:

Այն ատեն միայն կրնանք յուսալ ՄԻՈԻԹԵԱՆ՝ որ մեր ազատութեան առաջին պայմանն է:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆՇՇՈՒՅ (Ամերիկայ) 16 մայիս

Ամերիկայի հայոց մէջ չիք միութիւն, գէթ համերաշխութեան խընդիրը ընդհանրացած վիճակի մէջ կը գտնուի այսօր:

Հոս ամեն մի կօմիտէ և մասնաճիւղ արդէն զգացած լինելով միութեան մը անհրաժեշտութիւնը, ոչինչ չպիտի կարողանայ արգելք ըլլալ այս արդար պահանջին, քանզի ասոնց նպատակակէտը լինելով մի միայն միութիւն. ամեն ճիշդ կը թափեն արմատապէս ձուլուելու, և եթէ առանձին կօմիտէ մը կամ մասնաճիւղ մը իրենց անկարողութիւնը զգան, իսկոյն իրենց մէջ համաձայն գործունէութեան կանոնադրք մը գծելով, հետզհետէ կը հաշակուին շատ մը քաղաքներէ:

Կը յուսամ գաղտնիք մը երևան հանողներէն մէկը չպիտի համարուիմ երբ գիտել տամ նաև սոյն համերաշխութեան առթիւ եկած չըջաբերականներու վերջաբանը, որ գիթիէ բոլորն ալ հետեւեալները ՊԵՄԵՐՈՆՆԱԿԵՆ:

«Մենք Հնչ. մասնաճիւղի և Դաշ. կօմիտէի անդամներս, գոյացնելով մեր կատարեալ համերաշխութիւնը վերոյիշեալ կէտերու վրայ, պարտաւոր ենք բնաւ չընդիլ և մինչ իսկ վարչական խնդիր մը կամ կեդրոնական պահանջ մը, անկարող պիտի ըլլայ խղել սոյն համերաշխութիւնը»:

Ահա՛ այս գաղափարի միութեան համոզուած և եղբայրական սիրով ընդգրկուած հայերս օվ կարող է անջատել իրարմէ, և փենք մեծ յոյս ունինք, որ օր մը այս համերաշխութիւնը ընդհանուր ծաւալ մը գտնուի պիտի վերնայ երկու կողմէն պահանջը և պայմանը, և իրենց ընդհ. համերաշխութեան ժողովի մէջ քուէից մեծամասնութեամբ գծելով մի ծրագիր պիտի արժանանանք տեսնել ցանկալի միութիւնը:

Ամերիկայի մէջ համերաշխութիւն

գոյացնող քաղաքները որոնք ծանօթ են «Միութիւն»ի ընթերցողաց, այս շաբթին մէջ Նէշուէ ալ աւելցաւ, որը նաև գոյացնելով կատարեալ համերաշխութիւն, այսօր տեղի ունեցաւ մի ընդհանուր ժողով, ուր խօսեցան Պ. Գ. Չիթհեան և Պ. Տ. Վահանեան: Յարգելի պարոնները պարզեցին համերաշխութեան օգուտները, որը մի միայն կրնայ արտադրել ընդհանուր միութիւն մը:

Հակառակ հրապարակային ժողովներու մէջ եղած հակասութիւններու, որ յաճախ կը պատահէին, կարծես այսօրուայ ժողովը այլ էր իր տուած արդիւնքովն ու ազդեցութիւնովը, որ ներգործեց նաև կուսակցութեանց չպատկանող ժողովրդին վրայ:

ՀՈՂԻԿ

ԱԼԵԽՍԱՆԴՐԻԹ, 18 մայիս

Պէտք է լաւ ըմբռնել և համոզուիլ թէ մեր տարաբախտ ազգին ստացած վէրքերը անբուժելի պիտի մնան, եթէ անտարբեր մնանք դէպի միութիւն, որով միայն կարելի է ծածանուած տեսնել Հայկական ազատ դրօշը մեր Մայրենի-Երկրին մէջ: Իւրաքանչիւր հայ անհատ պարտաւոր է ձայն բարձրացնել, պահանջել և յղթնալից նաև համար այս սուրբ և շիրիւրար գաղափարը:

Միութիւնը տեղւոյս հայ երիտասարդներու սրտին մէջ մեծ դիրք մը բռնած է, միշտ կը գոչեն. «Հ, արդեօք ե՞րբ պիտի տեսնենք այն օրը որ ազգին փրկութեանը համար աշխատող մեր հայրենասէր անհատ կամ կապակերպութիւնները ձեռք ձեռքի տուած մէկ սիրտ մէկ հոգի, եղբայրաբար միասնաբար ու յեղափոխական գործը նոր շրջանի մը մէջ դնեն: Սպասենք.....»

Տեղւոյս յունակատակները կը շարունակեն հետզհետէ գաղթիլ. ընդ որս 15ի չափ հայ ընտանիք և շատ մը թրքահայկական յոյներ ալ իրենց վախէն կը մեկնին, որովհետև յունթրքական պատերազմէն ի վեր ճնշուածները սաստկացած են, թուրքերը ուր որ քրիստոնեայ մը տեսնեն, ըսպառնալիքներ կ'ընեն, պանծալով թէ տ է օ վ Լ է թ ի զօրքերը յաղթանակ

տարած են կ ե ա վ ու ը ն եր ու դ է մ, և 6 ժամ հեռի կը գտնուին եղեր Աթէնքէն:

Մեր երկրւոյ աւելի մասնիչներէն է, քաղաքիս մէջ 15ի չափ ԼԵՐ-տեսներ կան, որոնց մեծ մասը հայեր են դժբաղդաբար: Դանիէլեան Ներսէս վարդապետը՝ որ իր ազգասիրութեամբ թէ՛ հայ և թէ՛ օտար հասարակութեան համակրանքը զբաւաւած և օրն ի բուն կ'աշխատէր աղքատները խնամելու միջոցները խորհիլ, առանց կառավարութեան դէմ ու է վնասակար նպատակ մը ունենալու, այսուհանդերձ այդ թըշուառական ու հացկատակ լրտեսներու մատնութեամբ Հալէպի կուսակալութենէն խիստ հրաման եկաւ որ շուտով հեռանայ քաղաքէն:

Ահա՛ մեր անտանելի կացութիւնը. միթէ՞ միութիւն պէտք չէ մեզ համար որ ժամ առաջ ազատուելով իբրև մարդ պարիսր աշխարհի մէջ:

ԿԱՅԾԱԿ

ԼՕՐԷՆՍ, (Ամերիկա) 12 յունիս

Արդարեւ կարելի չէ անտարբեր մնալ ու շնորհակալ չըլլալ այն ազգի ու անկեղծ անձնաւորութիւններու, որոնք կը միասնաբար բազմապէս չար ու նահատակ ժողովրդի մը աղէտներուն վերջ տալու համար: Կուսակցամոլ և անգիտակից անհատներ դեռ յամառութեամբ կը շարունակեն իրենց ցնօրական արարքները, յենլով «գաղափար», «սկզբունք» բառերու ամուլ իմաստին վրայ... Ըսկ մեքենայական դրութեան մը հետեւած, չեն ուզեր մարտիրոս ժողովրդիս ազադակները լսել և յարգել ազգային սրբազան փառաքանները: Յսակասութեան ոգին խնայուցած է կարգ մը յեղափոխականներու ականջը և կուրացուցած է աչքերը: Եթէ մեր գործիչները վտարած ըլլային եսականութիւնը իրենց մէջէն, շատոնց մեր վիճակը բարեփոխուած կ'ըլլար:

Երբ ընդհանուր հայեացք մը արձակենք արտասահմանի գրականութեան վրայ, հոն կը տեսնենք ըստ բաւականի շաբաթաթերթեր և ամսաթերթեր, որոնք միահամուռ զատ զատ ազգին փրկիչներ են դարձած, իրարմէ տարբեր ծրագիրներ յօրինած, իրարու ձեռքէ խլել կ'ուզեն ազգային ապագայ ազատութեան

փառաց պատկեր: Աստուծոյ իւրաքանչիւրը՝ տարբեր նկատումներով հրապարակելով, կրթնած իր գաղափարին ու գրչին, երեւակայական աշխարհին մէջ օգտալին գլխակներ կը շինէ:

Հայաստան արեւմտ շաղախուած է, Հայաստան ամայացած է իր հաբաղատ զաւակներէն, մինչդեռ մեր կուսակցութիւնները զինուած իրարու դէմ գաղափարի և սկզբունքի անթափանց գրահովել պայքար կը մղեն, անարդար վարմունքով և պառակտական վատշուէր գրպարտութիւններով... երբ միութեան հարցը մէջտեղ ելած է և իր օգտակարութիւնը ապացուցուած է ճշմարիտ փաստերով, ինչ կը խորհին ընել մեր յեղափոխական գրիչները կամ խորին լուսթիւն և կամ մանուածապատ ոճերով բառախաղութիւններ կը սարքեն ոչ մէկուն խաթրը չլինասելու համար: Իսկ երբ աստուծոյ մին իր ընթացքին համար բնադատուի, նա իսկոյն իր գրչի աղեղը լարելով ինքնապաշտպանութեան կը դիմէ: Այո՛, ինչու չէ, անձնապաշտութիւնը այդպիսիներու համար գերադաս է անգլին շահերէն, Հայրենիքի բաղդը ձեռքերնին կրող կուսակցութիւնները իրարու դէմ կ'ելլեն այնչափ կրքոտ ու զինեալ, այնչափ վրէժխնդիր, գոցէ թուրքին դէմ այդպէս չկուեցան: Հոս ազատ գործները կամ կը լռեն և կամ որոշիչ լեզու մը չեն գործածեր այդ բաղադրանքներու դէմ: Միթէ՞ կը կը գտնուի մեր մէջ մէկը, որ պնդէ դեռ հաւատարմի ստրուկ մնալ Սուլթանին:

Ահաւասիկ յարմար պտենը և պատահառիթը որ երեւան կուգայ միութեան գաղափարը, որը՝ պիտի ըլլայ փորձաքար մը և զտիչ մը յեղափոխական ասպարէզին մէջ, միթէ՞ յեղափոխականին ներելի է անձնական նկատումներով ու կամակորութիւնով գինուել, թող հեռանան այդպիսիները յեղ. ասպարէզէն, որ բաւական երկար ատեն իբր հանք չհազործեցին ազգին արիւնը և հոտած գիւղերը... Գաղականեցին յեղափոխական ասպարէզին սուրբ պատիւը ու արժանիքը:

Օ՛ն ուրեմն Հայեր, ժամանակն է որ հաւաքուինք միութեան գրօթին տակ, ասպարէզ իջնանք և սկսինք վճռական քայլը առնել:

ԱՐՍՄ

ԳԱՀԻՐԻ, 20 յունիս

Նախորդ նամակովս ըսած էի թէ ի մի ձուլուինք և մեր բոլոր մտածումները կեդրոնացնենք տառապեալ Հայ ժողովրդին վրկութեանը եղանակներուն վրայ, Դաշնկ. յարգելի ընթերցողներէն ոմանք կ'առարկեն թէ՛ ինչ է վրկութեան եղանակները և ինչ կրնանք ընել միանալով: Ահա կարեւոր հարց մը որուն կուգամ հրապարակաւ պատասխանել:

Պոլսոյ «Պանքի» ցոյցէն վերջ հրապարակի վրայ գտնուած բոլոր յեղափոխականները և նոյն իսկ յեղափոխապետերը յուսահատեալ եւրոպական դիւանագիտութեան. հաւասարապէս պէտքը զգացած են կանոնաւոր պատրաստութեամբ մի քանի վայրերու լուրջ ապստամբութիւն մը, բայց հաղուադիւտ են անոր միջոցներուն վրայ խորհողները, բնաւ նրկատողութեան չեն առնել թէ մեր նպատակը իրագործելու համար, առնուազն 1—300000 ռուկի կը կարօտինք ներքին ոյժ մը գոյացնելով մի քանի ամիսներ անդադար թշնամիին դէմ մարտնչելու համար, և վստահ ըլլանք որ միայն այն ատեն պիտի վայելենք եւրոպական միջամտութիւնը: Զէյթունի ապստամբութիւնը օրինակ է մեզի, թէ և անմիջական արդիւնքը չտեսնուեցաւ, բայց վերջապէս ուրիշ վայրերու նման իբր ոչխար չլիտուիլն ալ մեծ բարեբաղդութիւն համարելու ենք:

Ուրեմն արդի գոյութիւն ունեցող կուսակցութիւնները արդեօք ունին կամ կարող են յիշեալ գումարը Հայթայթելու և մեզ մեր նպատակին հասցնելու: Այժմ ուրախ ըլլալու ենք որ 8—10 տարիներէ ի վեր գոյութիւն ունեցող և գրեթէ ժողովրդին մեծամասնութեան համակրութիւնը վայելող Հնչ. կուսակցութիւնը պառակտուումով մը յայտնեց իր ներքին տկարութիւնը՝ և միանգամայն խել մը դիմակաւոր և անխիղճ անհատներու ալ շահատակութիւնները: Թէպէտեւ այս պտուակտումը մէկ կողմէն յեղափոխական գործին վնասակար կը նկատեն, բայց միւս կողմէ Ազգք սա մեծ օգուտը ունեցաւ որ անշահախնդիր Հայրենասէրներու մեծամասնութիւնը զգացին իրենց կոյր հաւատքին սխալները և ստիպուեցան պատրաստուիլ նոր առաջնորդներու ազդեցութեան տակ գործելու, ա-

ռաջնորդներ, որոնք ընդհանուրի համակրութիւնը գրաւած և նիւթապէս վստահութիւն ներշնչած ըլլան:

Իսկ դեռ ոմանք արտաքին տեսարաններէ և ներքին պօռտախօսութիւններէ խաբուելով, կը կարծեն թէ Դաշնակցականները մեզ մեր նրկատակին կարող են հասցնել, բայց լուրջ և անկողմնակալ յեղափոխական մը եթէ մօտէն ծանօթ է Հնչ. կուսակցութեան նախկին վարիչներու մեքենայութիւններուն (նօրերու գործունէութիւնները դեռ չտեսանք) և գիտէ Ազգին արդի պահանջն որ մեծ գումարի կարօտ է, երբեք չմտաբերի իսկ թէ նիւթապէս ճոխ մանրավաճառէ մը աւելի կարողութիւն ունին և կամ կրնան Հայթայթել, որովհետեւ սոյն կուսակցութեան արտասահմանի «կօմիտէներուն» մէջ ալ չտեսնուիր լուրջ և անկեղծ դրամատէր անձ մը որ ընդհանուրի համակրութիւնը գրաւած և վստահութիւն ներշնչած ըլլայ, միևնոյն ատեն կը կարծուի թէ անոնց մէջ ալ չեն պակսիր...

Նաեւ աս ալ արդարանալի ճշմարտութիւն մըն է որ այլեւս երկրին Հայերէն նիւթապէս ո՛ր և է օգնութիւն չսպասուիր, և ընդհակառակը իրենք արտասահմանի ազգակիցներուն օգնութեանը կը կարօտին. իսկ արտասահմանի Հայերն ալ («հարուստ» և «աղքատ» բոլորն ալ միաբերան երկու կուսակցութիւններու ձուլումը կը պահանջեն օգնելու համար: Գրեթէ նիւթականէ զուրկ, ամենափոքր մաս մը կայ որ անգիտակցաբար կը հետեւի կուսակցութեանց: Ահա այս պատճառներով է որ դիմած են միութեան այն ամեն յեղափոխականները, որոնց փափաքն է ուղղակի ընկճեալ Ազգին օգտակար ըլլալ, որպէս զի ժողովրդին արդար պահանջներուն գոհացում տալով, առանց ամաչելու, համարձակին անոր աջակցութեան դիմել և միանգամայն լուրջ և անկեղծ դրամատէր անձինք գործի ասպարէզ հրաւիրել, որոնք իրենց համբաւովը յաջողին ըստ պատշաճի գումարը Հայթայթել, հակառակ մեր բաղձանաց եթէ չյաջողին իսկ, գոնէ ի պահանջել հարկին անձամբ կարող ըլլան մի քանի վայրեր սպառազինել յափշտակուած ազգ մը վայրենիի ճիւղաններէ ազատելու համար:

Թերեւս ըսողներ գտնուին թէ՛

ի՞նչ հաւանականութիւն կայ ընդհանրութեան յետոյ լուրջ դրամատեր անձինք գործի վարիչներ ըլլալու, և ինչո՞ւ զիջանած չեն մինչև հիմա, այն որ քանի մը տարիներ առաջ գրեթէ չնչ, կուսակցութիւնը միայն գոյութիւն ունէր:

Նախ խոստովանելու ենք որ մինչև ցարդ ո՛ր և է դիմում ըրած չենք զանոնք յեղ. գործին իբր վարիչներ ընդունելու, և մեր դիմումները մի միայն դրամի համար էին և այն ալ երբեմն սպառնալիքով, ասկից զատ կար նաև մեծ հակասութիւն մը, այն էր Նազարբեկեաններու ընկերավարական ծրագիրը որ ընթերցող հարուստ մը սարսափ կը զգար երբ կը տեսնէր կեանքին, ինչքի՞ւ և պատուոյն դէմ եղած դաւադրութիւնները: Այլ ի՞նչպէս կարելի էր միացնել կրակն ու վառօդը, նա մանաւանդ յեղ. թերթերու նողկալի հայհոյանքները բոլորովին անտարբերութեան մատնած էին զանոնք: Ահա ամենակարևոր անձանց մենէ անջատուելուն իսկական պատճառները:

Արդ, այսչափ քանդումներէ յետոյ այլ ևս մեր ինքնակոչ և անվստահելի յեղ. վարիչները արդեօք պէտքը չեն զգար անցեալի ապարդիւն գործունէութիւնները մոռնալով միայն իբր փորձառութիւն զատոնք յիշելու և ներկայիս միահամուռ գործելու փայլուն ապագայ մը պատրաստելու համար, որ եթէ երբեք մեր նպատակին իսկ չհասնինք, գոնէ Ազգին ոյժերը ջլատուած գործածելով՝ կրկին չլսասակար չըլլանք տարաբաղդ Ազգին, ուրեմն ով որ կը կրէ այս գաղափարը կը պաշտի միաբերան գոչել:

Կեցցէ՛ միութիւն ու կեցցէ՛ բարի նպատակ. — Միութեան հակառակօր ըլլան շան սատակ:

ԱՐԳՍՐ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

ԼՈՎԷԼ ՄԷՍ, 13 յունիս

Տէր Խմբագիր

Կարգացի «Միութիւն»ի 10 րդ համարի «Բառերու հետ չխաղանք» վերնագրով խմբագրական յօդուածը որ մատնանիշ ըրած էիք մեր բառերու հետ խաղալը, Ձեր այդ իրաւացի

դիտողութիւնը հաստատելու համար, կուգամ պատմել հետեւեալը, որուն ականատէս էի:

Քանի մը ամիս առաջ, երբ Ամերիկայի զանազան քաղաքներու, նոյնպէս ալ տեղւոյս Հնչակ, մասնաճիւղը և Դրօշակ. կօմիտէն (եթէ ըսեմ Հնչակ. և Դրօշակ. մասնաճիւղերը սըլալած կ'ըլլամ) միութեան կամ համերաշխ գործակցութեան խնդրոյն մասին խառն ժողով գումարեցին, այդ առթիւ երկու կազմակերպութեանց միջև նախապէս կատարուած պաշտօնական թղթակցութեանց մէկուն մէջ կը պարունակէր հետեւեալ խօսքը. «Դաշնակցութեան մէջ մասնաճիւղ բառը չգործածուիր, ուստի ձեր այդ սխալը շտկելու համար հաճեցէք յետ այսու «կօմիտէ» գործածել: Նամակին հասցէս փոխանակ Դաշնակց. կօմիտէի, Դաշնակ. մասնաճիւղին գրուած էր:

Տ. Խմբագիր, ահա՛ բան մը, որ դուք բոլորովին մոռցած էիք աւելցնել ձեր ըսածներուն մէջ թէ՛ Հընչակեանները զանազան տեղեր կուսակիցներ ունեցան, — նոյնը ունեցան Դաշնակցականներն ալ, սատարբերութեամբ որ առաջինը կը կոչուէր մասնաճիւղ, վերջինը կօմիտէ:

Ժողովին մանրամասնութիւնները աւելորդ կը համարիմ նկարագրել, միայն որպէս զի ժողովին արդիւնքը իմանաք, հետեւեալ մէկ հարցը ու պատասխանը փութամ ձեզ հաղորդեմ և հաստատել ձեր այն համոզումը թէ՛ Դաշնակցականները իբր «հոռմէական եկեղեցի» կը ներկայացնեն ապակեդրոնացումը, ուրկէ դուրս չկայ փրկութիւն»: Երբ առաջին անգամին ժողովը բացուեցաւ, Հնչակեաններու կողմէ հարց եղաւ թէ մեր Դաշնակցական եղբայրներու գաղափարը ի՞նչ է, այսինքն թէ ի՞նչ կերպով կարելի կը լինի միութիւն գոյանալ երկու կուսակցութեանց մէջ: Դաշնակցականներու կողմէ պատասխանուեցաւ թէ՛ երբ Հնչակեանները ընդունին մեր ապակեդրոնացումը, կարելի կը լինի միութիւնը. եթէ ոչ ուրիշ կերպ կարելի չէ: Այսպէս միութեան փափագ յայտնող մեր Դաշնակցական եղբայրները, մէկ խօսքով անկարելի ըրին միութեան խընդիրը: Հետեւաբար հարց եղաւ համերաշխութեան խնդիրը ու այնպէս հարց մնաց: Ամերիկայեան յեղա-

փոխականներս բառերու հետ խաղալով կը զանազանն մասնաճիւղ կօմիտէն, թուուցիկը չըջաբերականէն, տէռօրիստը ահաբեկիչէն, յանձնախումբը պիւռօէն և այլն: Թող Հայաստանի ժողովուրդը մենէ միութիւն պահանջէ, գործ սպասէ, մենք ալ հոս բառերու հետ կը խաղանք և ինքզինքնիս կը խաբենք, ըստ հասարակաց ճշմարիտ կարծիքին այս բառախաղութիւնները այն ատեն միայն պիտի վերջանան և ցանկացուած միութիւնը պիտի իրագործուի, երբ երկուսուք «զիջում» և «զոհողութիւն» լինի փոխադարձաբար...

Թող լա՛ւ համոզուին այս երկու կուսակցութեանց մասնաճիւղերը, որ «կեդրոնացում» և «ապակեդրոնացում» բառերը չեն կարող ազգը իր թշուառ կացութենէն ազատել, իւրաքանչիւրը իր կողմէն պարտաւոր է ընել այն զիջումը, որով կարելի լինի ի մի խմբուիլ և ձեռք ձեռքի տուած առկարէզ ելլել:

ՄԻՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԿԱՐԴ ՄԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ԶԻՆՈՆԺԱՆ

Կ Ա Մ

ՆՇԱՆԱԿԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

Սոյն ընտիր և գեղեցիկ գործը կուգայ այսօր Աղգ. հրապարակի վրայ մեծ պակաս մը լրացնելու: Մինչև ցարդ փոքրադիր լուսանկարը միայն հրապարակ ելած էր, որը խիստ անկատար ըլլալով՝ անբաւական էր լրացնելու պահանջուած պէտքը: Արտասահմանի ազգայիններու բազմաթիւ խնդրանաց համաձայն մեր ընկերներէն մին կը ձեռնարկէ այս գործը ի կատար հանելու, որ մօտ ժամանակէն պիտի տւարտի վիմագրութեամբ, մեծադիր, ընտիր թուղթի վրայ, իրական գոյներով և կատարելագործեալ ձևով:

Անշուշտ իւրաքանչիւր հայ անհատ պիտի փափաքի ունենալ իր ազգային փառաց զինանշանը, զարդարելու համար իր սենեակի ճակատը: Հայկական զինանշանը ունենալ փափաւորները թող հաճին խմբագրութեան հասցէին դիմել:

Գինն է երկու արծ. ֆրանք, փոսթին ծախքը զրկողն կը պատկանի:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՄԻՈՒԹԻՒՆ»Ի